Ուսուցիչների պարտադիր վերապատրաստում

Աշխարհագրություն

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ ՀՀ ժողովրդագրական իրավիճակը և ժամանակակից միգրացիոն գործընթացները

Ուսուցիչ՝ Արփինե Սարգսյան

Դասախոս՝ Աշոտ Խաչատրյան

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն 3

Ի՞նչ է միգրացիան 6

Միգրացիոն գործընթացները հայաստանի հանրապետությունում 11

Ժողովրդագրական իրավիճակ 15

Գրականության ցանկ 19

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Արդի դարաշրջանում բնակչության միգրացիաները զանգվածային և գլոբալ բնույթ են կրում՝ պատճառահետևանքային բազմակողմանի փոխադարձ կապերի մեջ գտնվելով հասարակության մեջ տեղի ունեցող քաղաքական, տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական և էթնո-մշակութային գործընթացների հետ: Բնակչության միգրացիայի առանձին կողմերի ուսումնասիրությամբ զբաղվում են բազմաթիվ գիտություններ, որոնց համակարգում առանձնահատուկ տեղ է գրավում աշխարհագրությունը, մասնավորապես՝ հասարակական աշխարհագրությունը (ՀԱ): Դա բացատրվում է հետևյալ երկու հանգամանքներով. ա) բնակչության միգրացիան սոցիալ-տարածական երևույթ է և զգալի ազդեցություն է թողնում հասարակության տարածքային կազմակերպման վրա, բ) բնակչության միգրացիան համալիրային երևույթ է, և, նկատի ունենալով աշխարհագրական հետազոտության ինտեգրալ ներուժն ու համակարգային բնույթը, աշխարհագրությունն այլ գիտությունների համեմատ ավելի պատրաստ է իրականացնելու միգրացիայի բազմակողմանի և փոխկապակցված տարածաժամանակային և համալիրային ուսումնասիրություններ: Բնակչության միգրացիայի մասշտաբներն ավելի մեծ են լինում, և դրանց ազդեցությունն ու հետևանքներն առավել ցայտուն են դրսևորվում այն երկրներում ու տարածաշրջաններում, որտեղ վերջին երկու-երեք տասնամյակներին հասարակական կյանքի տարբեր ոլորտներում տեղի են ունեցել համակարգային և արմատական փոփոխություններ: Այդպիսի երկրների թվին է պատկանում նաև Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ), որտեղ անկախացումից հետո տեղի ունեցած քաղաքական, տնտեսական և սոցիալ-ժողովրդագրական տեղաշարժերն առաջացրել են բնակչության արտագաղթի մեծ ալիքներ: Այդ ամենի արդյունքում երկրից արտագաղթում է տարեկան միջին հաշվով

բնակչության 1,5%-2%-ը:[1] Ներկայումս հրատապ են դարձել ՀՀ բնակչության միգրացիայի աշխարհագրական ուսումնասիրությունները, քանի որ բնակչության արտաքին և ներքին միգրացիոն տեղաշարժերը պատճառահետևանքային սերտ կապերի մեջ են գտնվում հասարակական կյանքի տարբեր ոլորտներում տեղի ունեցող գործընթացների հետ և շարունակում են զգալի ազդեցություն թողնել տնտեսության զարգացման և տարածքային կազմակերպման վրա: ՀՀ բնակչության միգրացիայի առաջացրած սոցիալ-տնտեսաաշխարհագրական բազմաբնույթ հիմնախնդիրները ՀՀ ռազմավարական անվտանգային շահերի տեսանկյունից էապես մեծացնում են մարզերի և համայնքների բնակչության արդի միգրացիոն տեղաշարժերի տարածաժամանակային և համալիրային բազմակողմանի ուսումնասիրությունների իրականացման անհրաժեշտությունն ու հրատապությունը:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է՝ կատարել ՀՀ բնակչության միգրացիայի համալիրային և տարածաժամանակային աշխարհագրական վերլուծություն, բացահայտել և գնահատել միգրացիոն տեղաշարժերի արդի վիճակը, պատճառահետևանքային կապերը և ազդեցությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտների զարգացման և տարածքային կազմակերպման վրա: Հետազոտության նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ հետազոտական խնդիրները: 1. Վերլուծել և ընդհանրացնել բնակչության միգրացիայի աշխարհագրական հետազոտության արդի տեսական գաղափարներն ու մեթոդաբանական 4 մոտեցումները, փորձել դրանց օգտագործմամբ մշակել ՀՀ բնակչության միգրացիայի աշխարհագրական հետազոտությունների հիմնական ուղղությունները, մակարդակները, մեթոդներն

[1]Մարզպանյան Հ., Մարկոսյան Ռ., Խաչատրյան Ն.-Միգրացիայի ռիսկերը եվ մարդկային կապիտալի վերարտադրությունը. Հարցադրումներ, հարցումներ, համադրումներ, Երևան ԵՊՀ հրատարակչություն, 2016

ու մոտեցումները: 2. Բացահայտել ՀՀ բնակչության արդի միգրացիոն հոսքերի ձևավորման քաղաքական, տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական և էթնո-մշակութային գործոններն ու պայմանները, պարզել դրանց կապը միգրացիայի տարածաժամանակային փոփոխությունների հետ: 3. Վեր հանել միգրացիայի տարածաշրջանային առանձնահատկությունները, պարզել տարբեր տիպի և մեծության բնակավայրերի բնակչության միգրացիոն տրամադրվածությունները, դրանք առաջացնող համապետական և համայնքային գործոններն ու հիմնախնդիրները: 4. Բացահայտել բնակչության միգրացիայի և տարաբնակեցման փոխադարձ կապերը, առանձնացնել միգրացիոն առումով առավել խոցելի տարաբնակեցման կենտրոններն ու բնակավայրերի տիպերը: **Հետազոտության օբյեկտն ու առարկան:** Հետազոտության օբյեկտը ՀՀ բնակչության ժամանակակից արտաքին և ներքին միգրացիոն տեղաշարժերն են, իսկ հետազոտության առարկան՝ ՀՀ բնակչության միգրացիաների տարածաժամանակային փոփոխություններն ու առանձնահատկությունները, հասարակական կյանքի տարբեր ոլորտների տարածքային կազմակերպման հետ ունեցած փոխադարձ կապերը:

Ի՞նչէ Միգրացիան

Տեղաշարժը մի բնակավայրից մյուսը ուղեկցել է մարդուն իր պատմության ողջ ընթացքում: Քաղաքակրթությունների ձևավորումը, զարգացումը և անկումը մեկնաբանող հայեցագարգերի շարքում հստակորեն առաձնանում են այդպիսիք, որոնք որպես մեկնաբանական տարր ընտրել են միգրացիան: Երևի թե չկա որևէ պատմական շրջան, քաղաքակրթություն, պետություն, որն անմասն է մնացել միգրացիայից: Այս իմաստով առավել նշանակալի է 20-րդ դարը, որը հենց սկզբից համեմված է եղել միգրացիոն հոսքերով: Դարի ընթացքում իրար փոխարինող բռնի տեղահանությունները, առևտրա-տնտեսական, աշխատանքային, բնապահպանական և այլ միգրացիոն հոսքերը յուրովի ձևավորել են պետությունների, տարածաշրջանների կենսական ընթացքը, սոցիալական, տնտեսական, քաղաքական և մշակութային վերարտադրումը: Միգրացիոն շրջապտույտներն իրենց ինտենսիվությամբ, քանակական, որակական դրսևորումներով գագաթնակետին հասան 20-րդ դարի վերջին քառորդում և 21-րդ դարասկզբին: Իրավիճակի ձևավորմանը նպաստեցին խորացող գլոբալ և լոկալ անորոշությունը, տարածաշրջանների սոցիալ-տնտեսական, քաղաքական կենսագործունեության ասսիմետրիկ զարգացումը, առանձին երկրների համար անցանկալի ընթացքը, քաղաքական համակարգերի անկումն ու չտեսնված վերափոխումները, կապիտալի վերարտադրման և կուտակման էքստենսիվ ձևերը, աշխատանքի և ռեսուրսների նոր վերաբաշխումը :[2] Փոփոխություններն ու զարգացումները այլևս սահմանափակված և տեղայնացված չեն: Դրանք տեղի ունենալով ուժգին փոխկապակցվածությամբ աչքի ընկնող գլոբալ աշխարհում իրենց արագացող, հաճախ բացասական, անկանխատեսելի ազդեցությունն

[2]Մանասյան Հ., Մանասյան Մ., Վայոց Ձորի մարզի բնակչության միգրացիայի և տարաբնակեցման արդի հիմնախնդիրները, մարզերի զարգացման սոցիալտնտեսական հիմնախնդիրները ՀՀ-ում, Երևան, Նահապետ 2014, էջ 46-53

ունեն աշխարհի հեռավոր անկյուններում գտնվող հասարակությունների, պետությունների վրա: Հանդես գալով որպես գլոբալ և լոկալ փոփոխությունների արդյունք՝ միգրացիան իր հերթին, հաճախ օտարվելով ձևավորող նախապայմաններից, հիմք է մեծ թվով գործընթացների, հասարակական կյանքի անկանխատեսելի, վտանգավոր, լարվածություն և անորոշություն առաջացնող մետամորֆոզների: Արդյունքում ունենք գլոբալ սոցիալական խառնարան, որի անդամն են նույնսկ աշխարհի հեռավոր անկյունների բնակիչները և ուր համաշխարհային միգրացիան թե քանակապես և թե որակապես գնալով ընդարձակվում է՝ իր ոլորապտույտի մեջ ներառելով նոր տարածաշրջաններ, սոցիալական նոր ձևեր և նոր մարտահրավերներ:

Բնակչության միգրացիաները սոցիալ-տնտեսական տարածական բարդ և համալիրային երևույթներ են և գտնվում են տարբեր հասարակական գիտությունների (տնտեսագիտություն, սոցիոլոգիա, ժողովրդագրություն, հասարակական աշխարհագրություն) հետաքրքրությունների կենտրոնում, քանի որ դրանք կապված են հասարակական կյանքի բոլոր ոլորտների հետ և զգալի ազդեցություն են թողնում սոցիալ-ժողովրդագրական և տնտեսականքաղաքական տարբեր գործընթացների վրա: Բնակչության միգրացիան, լինելով տարածական երևույթ, իր բնույթով նախ և առաջ աշխարհագրական է և որոշակի առումով արտահայտում է տարբեր տարածքների և բնակավայրերի փոխհարաբերությունների բնույթը: Դրանով է բացատրվում միգրացիոն գործընթացների նկատմամբ աշխարհագրության առանձնահատուկ հետաքրքրությունը: Սակայն աշխարհագրությունը չպետք է սահմանափակվի միայն միգրացիայի տարածական կողմերը ուսումնասիրելով, քանի որ, միգրացիան, լինելով բարդ սոցիալ-տարածական երևույթ և մարդկանց վրա բազմաթիվ և բազմապիսի գործոնների ազդեցության հետևանք, պահանջում է նաև տարածաժամանակային ու համալիրային ուսումնասիրություններ, որտեղ միգրացիա երևույթը, հասարակական կյանքի

բոլոր ոլորտների հետ ունեցած իր տարաբնույթ փոխադարձ կապերով, պետք է դիտվի մեկ ամբողջական տարածական համակարգի մեջ:

Ըստ տարածքի ընդգրկման՝ միգրացիաները լինում են արտաքին և ներքին: Արտաքին միգրացիաներ են արտագաղթը (էմիգրացիան) և ներգաղթը (իմիգրացիան):[3]
Նկարում ներկայացված են միգրացիաների տեսակները ըստ տևողության, կազմակերպման եղանակների և ձևերի:



Էմիգրացիան քաղաքացիների մեկնումն է սեփական երկրից, իսկ իմիգրացիան՝ այլ երկրի քաղաքացիների մուտքը տվյալ երկիր: Արտաքին միգրացիաներ դիտվել

[3]МанасянА., МанасянМ., устойчивоеразвитиегорныхрегионовигеография, modern problems of geography and anthropology, proceedings of international conference, Tbilisi, 2015, pp. 321-323

են մարդկության պատմության ողջ ընթացքում (օր՝ «ժողովուրդների մեծ գաղթը»): Ամերիկա, Ավստրալիա աշխարհամասերի հիմնական բնակչությունը Եվրոպայից ներգաղթածների սերունդներն են (միայն 19-րդ դարում մոտ 60 մլն մարդ է միգրացիա կատարել):

Միգրացիաների դրդապատճառները (շարժառիթները, մոտիվները) Կրոնական շարժառիթով զանգվածային գաղթեր են տեղի ունեցել 1947 թ.-ին Հնդկաստանում, երբ մահմեդականներն առանձնացան Պակիստանում, իսկ Պակիստանից միլիոնավոր հնդուականներ և բուդդայականներ տեղափոխվեցին Հնդկաստան:

Քաղաքական և ազգային միգրացիայի օրինակ է Ադրբեջանից մոտ 400 000 հայերի հարկադրված գաղթը (դեպորտացիան) (իրականում փախուստը կյանքը փրկելու նպատակով) ՀՀ և այլ երկրներ: Վերջին 20 տարվա ընթացում ՀՀ-ից արտագաղթել է մոտ 1 մլն մարդ՝ հիմնականում սոցիալ-տնտեսական շարժառիթով:



Ներքին միգրացիան տեղի է ունենում հիմնականում չորս ուղղությամբ՝ գյուղից քաղաք, քաղաքից գյուղ, գյուղից գյուղ, փոքր քաղաքից մեծ քաղաք: Բազմաթիվ երկրներում ներքին միգրացիաներ կատարվում են նախկինում յուրացված և խիտ բնակեցված շրջաններից դեպի նոր յուրացվող շրջաններ:

Միգրացիոն գործընթացները Հայաստանի Հանրապետությունում

Միգրացիոն գործընթացների զարգացման պատմական ակնարկ ԽՍՀՄ փլուզումը և նորանկախ պետությունների ստեղծումը ուղեկցվեց բնակչության աննախադեպ միգրացիոն տեղաշարժերով: Հայաստանում այս երևույթը հատկապես մեծ մասշտաբների հասավ 1988թ. սպիտակյան ավերիչ երկրաշարժի, և Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում և Ադրբեջանի այլ բնակավայրերում ազգությամբ հայ քաղաքացիների զանգվածային ջարդերի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում և հարակից տարածքներում պատերազմական գործողությունների հետևանքով: Այս իրադարձությունները, ինչպես նաև Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի տնտեսական շրջափակումը, հանգեցրին զանգվածային միգրացիոն հոսքերի առաջացմանը ինչպես Հայաստանից այնպես էլ դեպի Հայաստան: Դա զանգվածային տեղաշարժերի առաջին փուլի սկիզբն էր, որը տևեց մինչև 1992 թվականը: Ընդհանուր առմամբ, 1988-1991 թթ-ի ընթացքում հանրապետությունն ընդունել է ավելի քան 420 հազար փախստականների և հարկադիր տեղահանվածների, որոնց հիմնական մասը՝ գրեթե 360 հազար մարդ, Ադրբեջանից, մնացածը՝ նախկին ԽՍՀՄ այլ հանրապետություններից: Նույն տարիներին հանրապետությունից հեռացել են ընդհանուր առմամբ շուրջ 160 հազար հայաստանաբնակ ադրբեջանցիներ: Որպես սպիտակյան երկրաշարժի անմիջական հետևանք 1989թ. ընթացքում աղետի գոտու բնակավայրերից Հայաստանից դուրս էվակուացվեցին ընդհանուր առմամբ մոտ 200 հազար մարդ (հիմնականում կանայք և երեխաներ): 1989-1990թթ. ընթացքում նրանց 3/4-ը (150 հազար մարդ) վերադարձավ հանրապետություն: Այս ամենի հետևանքով Հայաստան չվերադարձած գրեթե 50 հազար անձինք հետագայում ձգելով աղետի գոտու աննախանձելի իրողություններում գտնվող իրենց ընտանիքների անդամներին և մերձավորներին, արդեն 1989-1990թթ. սկիզբ դրեցին հանրապետության բնակչության արտահոսքի նոր ալիքին, ինչը 1992-1994թթ.

ընթացքում վերաճեց զանգվածային արտագաղթի, որն առավել ակտիվ ընթացք ունեցավ հենց աղետի գոտում: Հայաստանից զանգվածային արտագաղթի երկրորդ փուլը վերաբերում է 1992-1995 թվականներին: Դա կապված էր Խորհրդային Միության փլուզումից հետո երկրում տնտեսական ճգնաժամի հետևանքով առաջացած սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական գործոնների, և, հատկապես, Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից Հայաստանի ճանապարհատրանսպորտային և առևտրատնտեսական շրջափակման հետ: Այդ ժամանակաշրջանում արտագաղթողները հիմնականում երկրում տնտեսական ճգնաժամի պատճառով աշխատատեղեր կորցրած բարձրակարգ և որակյալ մասնագետներն էին: Արտագաղթի այս ալիքի արդյունքում բնակչության գրեթե մեկ հինգերորդը հեռացավ Հայաստանից, ինչը հանգեցրեց ուղեղների զանգվածային արտահոսքի: Տարբեր գնահատականներով, 1992-1995 թթ-ին միգրացիայի բացասական մնացորդը կազմել է ավելի քան 600 հազար մարդ կամ բնակչության մոտ 17%-ը: Արտագաղթի հսկայական մասշտաբները և դրա բացասական ազդեցությունը պետության անվտանգության և հասարակական կյանքի բոլոր կողմերի վրա՝ այս երևույթի կարգավորումը վերածեցին պետության համար առաջնային նշանակություն ունեցող հարցի: Արտագաղթի երրորդ փուլը ներառում է 1995-2001 թվականները և բնութագրվում է արտագաղթի ծավալների նվազմամբ: Այն հիմնականում պայմանավորված էր երկրում սոցիալ-տնտեսական իրավիճակի կայունացմամբ: Մյուս կողմից, պետության միգրացիոն ներուժը զգալիորեն փոքրացել էր նախորդ տարիների արտագաղթի մեծ ծավալների արդյունքում: Հիմնականում, այդ ժամանակահատվածում տեղի է ունեցել այն միգրանտների ընտանիքի վերամիավորման գործընթացը, որոնք ավելի վաղ էին մեկնել երկրից: Ըստ գնահատականների, այս շրջանում մոտ 600 հազար մարդ մեկնել էր երկրից, մինչդեռ մուտքերի թիվը կազմել էր շուրջ 350 հազար6 : Չորրորդ փուլը ժամանակային առումով իր մեջ ներառում է 2002-2009 թթ. և բնութագրվում է որպես ուղևորաշրջանառության ծավալների աճի և միգրացիայի բացասական մնացորդի հետագա կրճատման ժամանակաշրջան: Այս փուլը աչքի

ընկավ տարեց տարի աճող միջազգային ուղևորաշրջանառության (արտաքին միգրացիայի) ծավալների աճով և նախորդ փուլի համեմատ միգրացիայի բացասական մնացորդի նվազմամբ:[4] Միգրացիոն իրավիճակի նման փոփոխումն առաջին հերթին հետևանք էր այդ տարիներին Հայաստանի տնտեսական զարգացման համեմատաբար բարձր տեմպերի: Այս փուլում միգրացիայի միջին տարեկան ցուցանիշը կազմել է -3,5 հազար, իսկ առանձին տարիներին այն ունեցել է նույնիսկ դրական նշանակություն: Որոշ հետազոտությունների տվյալներով 2002-2007թթ. ՀՀ-ից արտագաղթել են 700.000 անձինք, մինչդեռ ներհոսքը կազմել է 600.0007 : Հինգերորդ փուլ (2010թ. ի վեր): Այս ժամանակահատվածում տեղի է ունեցել ՀՀ բնակչության արտաքին միգրացիոն հոսքերի ծավալների աճ, և ըստ վերջին ընտրանքային հետազոտության8 արդյունքների, այդ աճի երևույթը ձեռք է բերել արագացող միտում: Եթե 2012-2014թթ. դրա միջին տարեկան նշանակությունը եղել է մոտ 35 հազար մարդ, 2013-2015թթ.՝ 37,5 հազար մարդ, ապա 2014-2017 թթ-ին՝ արդեն 40 հազար մարդ: Անհրաժեշտ է նշել, որ 2017թ. տեղի է ունեցել այս ցուցանիշի նվազում՝ նախորդ տարվա համեմատ -44.2%-ով: Հանրապետության միգրացիոն իրավիճակում շարունակում է զգալի դեր խաղալ ժամանակավոր աշխատանքային միգրացիայի երևույթը, որն իրականացվում է ինչպես կարճատև (սեզոնային), այնպես էլ տևական (անորոշ) ժամկետով աշխատանքի նպատակով ուղևորություններ կատարելու տեսքով: 2000 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգը» դարձավ Հայաստանի միգրացիոն քաղաքականության ոլորտում ընդունված առաջին համապարփակ փաստաթուղթը: Այս փաստաթղթի ընդունմամբ պետական մակարդակով

[4]Մանասյան Հ., Մանասյան Մ., ՀՀ լեռնային տարածաշրջանների կայուն զարգացման հիմնահարցերը (Սյունիքի մարզի օրինակով), ԵՊՀ տարեգիրք 2013, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014, էջ 671-680

առաջին անգամ սահմանվեց միգրացիոն քաղաքականությունը, դրա նպատակները և խնդիրները: Սահմավել են միգրացիոն հոսքերի աջակցության բազմազան տարբերակներ՝ հաշվի առնելով պետության շահերը, ինչպես նաև նախատեսվել միջոցառումներ ուղղված էմիգրացիայի բացասական ազդեցության նվազմանը: Էմիգրացիոն հոսքերի փոփոխությամբ պայմանավորված նոր խնդիրների առաջացման պատճառով հայեցակարգը վերանայվեց 2004թ-ին.: 2010թ. դեկտեմբերի 30-ին ՀՀ կառավարությունը հավանություն տվեց Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման հերթական հայեցակարգին: Ինչպես պաշտոնական վիճակագրությունը, այնպես էլ հետազոտական տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանից արտագաղթի հիմնական վեկտորը ուղղված է դեպի հետխորհրդային երկրներ, մասնավորապես՝ դեպի Ռուսաստան (բոլոր արտագաղթողների մոտ 75% -ը), եվրոպական երկրներ (մոտ 15%) և ԱՄՆ (մոտ 10%: Փորձագետների գնահատմամբ, 1990թ-ից 2013թ-ը բնակչության մոտ 30 տոկոսը կամ 1/3- ը մասնակցել են արտաքին միգրացիոն տեղաշարժերին: Մեկնելու հիմնական պատճառը եղել է զբաղվածության խնդիրը: Ինչպես արդեն նշվեց Էմիգրացիոն հոսքերում ամենամեծ մասնաբաժինը կազմում են աշխատանքային միգրանտները: 2013 թվականին անցկացված ընտրանքային հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ ՀՀ քաղաքացիների 10 մեկնումից 8-ը արտերկրում աշխատանքի տեղավորվելու պատճառով է: Նշված ժամանակահատվածում իմիգրացիոն հոսքերը համեմատաբար փոքր են եղել: Դրանք հիմնականում ձևավորվել են աշխատանքային միգրանտների, ուսանողների, ազգությամբ հայ լինելու հիմքով Հայաստանում կացության կարգավիճակ ստացած օտարերկրյա քաղաքացիների և ՀՀ-ում ապաստան հայցող անձանց հաշվին:

Ժողովրդագրական իրավիճակը

Բնակչության թվաքանակ և բնական շարժ ՀՀ վարչատարածքային բաժանման հիմքը «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներն են, որոնց համաձայն ՀՀ տարածքը բաժանվում է 10 մարզերի և ք.Երևանի:

ՀՀ վարչատարածքային բաժանումն ըստ ՀՀ մարզերի և ք.Երևանի, 2020թ. ապրիլի 1-ի դրությամբ

	Համայնքների քանակը, ընդամենը	Բնակավայրերի քանակը
Հայաստանի Հանրապետություն	**502[1]**	**1 004**
ք. Երևան	1	1
Արագածոտն	72	120
Արարատ	95	99
Արմավիր	97	98
Գեղարքունիք	57	98
Լոռի	56	130
Կոտայք	42	69
Շիրակ	42	130
Սյունիք	8	138
Վայոց ձոր	8	55
Տավուշ	24	66

2011թ. մարդահամարի հիմքով վարվող բնակչության ընթացիկ հաշվառմամբ, ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը 2020թ. ապրիլի 1-ի դրությամբ կազմել է 2 956.9 հազ. մարդ, այդ թվում քաղաքայինը՝ 1 890.6 հազ.մարդ և գյուղականը՝ 1 066.3 հազ. մարդ:

ՀՀ մշտական բնակչության թվաքանակն ըստ ՀՀ մարզերի և ք.Երևանի, ապրիլի 1-ի դրությամբ

հազ.մարդ

	Ընդամենը		Քաղաքային		Գյուղական	
	2019թ.	2020թ.	2019թ.	2020թ.	2019թ.	2020թ.
Հայաստանի Հանրապետություն	**2 962.1**	**2 956.9**	**1 893.4**	**1 890.6**	**1 068.7**	**1 066.3**
ք. Երևան	1 081.6	1083.8	1 081.6	1 083.8	-	-
Արագածոտն	125.2	124.6	26.9	26.7	98.3	97.9
Արարատ	256.6	256.4	72.2	72.0	184.4	184.4
Արմավիր	263.8	263.7	82.6	82.4	181.2	181.3
Գեղարքունիք	227.8	227.3	66.8	66.4	161.0	160.9
Լոռի	214.9	212.8	127.4	125.8	87.5	87.0
Կոտայք	251.4	250.8	137.3	136.8	114.1	114.0
Շիրակ	232.7	230.8	136.6	135.3	96.1	95.5
Սյունիք	137.3	137.0	93.2	93.0	44.1	44.0
Վայոց ձոր	48.8	48.5	17.2	17.1	31.6	31.4
Տավուշ	122.0	121.2	51.6	51.3	70.4	69.9

ՀՀ բնակչության տեղաշարժերը

Հայաստանի անկախացմամբ կտրուկ նվազեցին ներքին միգրացիայի ծավալները, քանի որ երկրում ստեղծված սոցիալտնտեսական և քաղաքական ծանր իրավիճակը հանգեցրեց նրան, որ նախկինում ներքին միգրացիոն ակտիվությամբ աչքի ընկնող քաղաքներն իրենք դարձան արտահոսքի խոշոր կենտրոններ: Խորհրդային տարիներին գերակշռող՝ գյուղից քաղաք ուղղությամբ միգրացիաներն անկախության առաջին տասնամյակում մասամբ փոխարինվեցին քաղաքից գյուղ ուղղությամբ մարդկանց տեղաշարաժերով՝ պայմանավորված գյուղատնտեսական հողերի սեփականաշնորհմամբ և գյուղատնտեսության ոլորտի համեմատաբար բարվոք վիճակով: Հայաստանի քաղաքների (1975-2001թթ.) և ՆՎԾ-երի գյուղական բնակչության (1986-2001թթ.) եկողների և մեկնողների թվաքանակների տարածաժամանակային վերլուծության արդյունքում առանձնացրել ենք քաղաքների 6 և ՆՎԾ-երի 5 հիմնական խմբեր, որոնք իրարից տարբերվում են միգրացիոն տեղաշարժերի ուղղությունների ու ծավալների բնույթով և ակտիվ ու պասիվ փուլերով: Ընդհանուր առմամբ,

քաղաքների դեպքում նկատվում է այն օրինաչափությունը, որ խորհրդային տարիներին ՄՍ-ն մեծամասամբ եղել է դրական, իսկ անկախության տարիներին՝ բացասական: Ե՛վ քաղաքային, և՛ գյուղական բնակավայրերի դեպքում միգրացիայի մասշտաբները մեծացել են 1987- 1992թթ., պայմանավորված երկրում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական և քաղաքական լուրջ տեղաշարժերով:[5] ՆՎԾ-երի գյուղական բնակչության դեպքում նույնպես 1990-ական թթ. երկրորդ կեսին ՄՍ-ն հիմնականում եղել է բացասական, իսկ միգրացիոն տեղաշարժերի ծավալները՝ փոքր:

ՀՀ բնակչության տեղաշարժերի վարչական հաշվառումները, հունվար-մարտ(Ըստ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից ստացված տեղեկատվության):

[5]Մանասյան Հ., ՀՀ բնակչության միգրացիայի և տարաբնակեցման փոխադարձ կապերը, ՀՀ տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները, հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, էջ 116-120

գրանցման ակտ

	Հաշվառման գործողություն			Հաշվառումից հանելու գործողություն		
	2018թ.	2019թ.	2020թ.	2018 թ.	2019թ.	2020թ.
ՀՀ բնակչության պետական ռեգիստրում գրանցված տեղաշարժեր, ընդամենը (1+2+3)	**12 833**	**14 576**	**16 198**	**12 833**	**14 576**	**16 198**
1. ՀՀ բնակության հասցեներով (1ա+1բ+1գ) [1]	9 290	10 281	12 000	8 082	8 924	10 738
որից՝						
1ա/ներհանրապետական տեղաշարժեր	7 311	8207	10 021	7 311	8 207	10 021
1բ/ օտար երկրներ/ից տեղաշարժեր	736	856	996	771	717	717
այդ թվում՝ ըստ երկրների						
ՌԴ	140	172	217	213	201	175
ԱՀ	169	165	179	107	77	112
Վրաստան	167	122	153	84	70	118
Սիրիա	105	109	121	0	2	0
Իրան	36	77	89	3	5	7
Լիբանան	29	57	96	0	2	4
Ուկրաինա	26	31	31	23	27	21
ԱՄՆ	17	27	25	85	94	56
Ղազախստան	7	18	12	47	32	20
Ուզբեկստան	3	8	1	1	0	3
Գերմանիա	2	7	7	38	39	56
Ֆրանսիա	5	6	9	48	62	60
Բելառուս	3	6	4	14	6	7
Իսպանիա	0	4	3	24	30	21
Շվեդիա	4	4	5	5	7	5
Բելգիա	1	1	0	17	17	10
Հունաստան	2	3	5	16	7	15
Նիդերլանդներ	0	0	0	6	10	3
Այլ երկիր	20	39	39	40	29	24
ԱՊՀ երկրներ	*184*	*242*	276	*300*	*267*	226
ԵԱՏՄ երկրներ	*150*	*196*	233	*274*	*239*	202
1գ/. Ժամանման /մեկնման երկիրը չնշված	1 243	1 218	983	0	0	0
2. Չնշված բնակավայրի հասցեով	0	0	0	3 176	3 888	3 370
3. Օտարերկրյա պետություններում իրենց բնակության հասցեով [2]	3 543	4 295	4 198	1 575	1 764	2 090

Գրականության ցանկ

1. Մարզպանյան Հ., ՄարկոսյանՌ., ԽաչատրյանՆ.- Միգրացիայիռիսկերըեվմարդկայինկապիտալիվերարտադրությունը. Հարցադրումներ, հարցումներ, համադրումներ, ԵրևանԵՊՀհրատարակչություն, 2016
2. Մանասյան Հ., ՄանասյանՄ., ՀՀ լեռնային տարածաշրջանների կայուն զարգացման հիմնահարցերը (Սյունիքի մարզի օրինակով), ԵՊՀտարեգիրք 2013, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014, էջ 671-680
3. Մանասյան Հ., Մանասյան Մ., ՎայոցՁորի մարզի բնակչության միգրացիայի և տարաբնակեցման արդի հիմնախնդիրները, մարզերի զարգացման սոցիալտնտեսական հիմնախնդիրները ՀՀ-ում, Երևան, Նահապետ 2014, էջ 46-53
4. МанасянА., МанасянМ., устойчивоеразвитиегорныхрегионовигеография, modern problems of geography and anthropology, proceedings of international conference, Tbilisi, 2015, pp. 321-323
5. ՄանասյանՀ., ՀՀբնակչությանմիգրացիայիևտարաբնակեցմանփոխադարձկապերը, ՀՀտնտեսությանզարգացմանևտեղաբաշխմանժամանակակիցհիմնախնդիրները, հանրապետականգիտաժողովինյութեր, Երևան, ԵՊՀհրատարակչություն, 2015, էջ 116-120